ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Տաթևիկ Փարսադանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում…….4

Գեղագիտական դաստիարակության միջոցները դպրոցում…….8

Եզրակացություններ…….....12

Օգտագործած գրականության ցանկ……13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների ու դաստիարակողների համատեղ գործունեության գործընթացն է՝ ուղղված դպրոցականների գեղագիտական կուլտուրայի ձևավորմանը: Դպրոցականների գեղագիտական կուլտուրան իր մեջ ընդգրկում է նրանց զգացմունքների, գիտակցության, վարքի ու գործունեության գեղագիտական զարգացման որոշակի աստիճանը: Նոր սերնդի դաստիարակության հարցում մեծ դեր է կատարում գեղագիտությունը: Գեղագիտական դաստիարակությունը առավել լայն հասկացություն է իր բովանդակությամբ, որի թե հասարակական, թե բուն մանկավարժական նշանակությունն ավելի մեծ է, քան կարելի է պատկերացնել:

Ուսուցիչ-դաստիարակի գեղագիտական բարձր կուլտուրան հնարավորություն է տալիս սաների մեջ առաջ բերել գեղեցիկի զգացողություն, դրանով հարստացնել ու նրբացնել հոգին, սովորեցնել տեսնել, հասկանալ ու գնահատել գեղեցիկը, վսեմը կյանքում, բնության մեջ, արվեստի բնագավառում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ցույց տալ, որ արդի պայմաններում գեղագիտական դաստիարակության նշանակությունն անընդհատ աճում է, քանի որ գեղագիտական դաստիարակությունն ավելի է ոգեշնչում աշխատանքը, վեհացնում մարդուն և գեղեցկացնում նրա կենցաղը: Մանկավարժների կողմից ղեկավարվող աշակերտների բազմապիսի գեղագիտական գործունեության մեջ կիրառվում է գեղարվեստական գեղագիտական միջոցների կոմպլեքս: Դրանցից հիմնականներն են՝ իմացությունը, աշխատանքը, խաղը, հաղորդակցումը, բնությունը, արվեստը, գրականությունը, կենցաղային պայմանները:

Աշխատանքի խնդիրն է՝

Բացահայտել կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության նպատակն ու խնդիրները:

Հետազոտության գործնական նշանակությունն է բացահայտել և գործնականում ներկայացնել ուսումնական գործընթացում կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության միջոցները:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի նաև գեղագիտական դաստիարակվածություն և կրթվածություն:

Գեղագիտությունը կամ էսթետիկան որպես գիտություն ձևավորվել է 18-րդ դարում, սակայն որպես գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է իրականության կարևորագույն, հետաքրքիր ու ամենազարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը եղել է մարդկային գործունեության հիմնական և կարևոր նպատակներից մեկը:

Գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը հասկանալու, տեսնելու, ճանաչելու, զգալու նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց այդ նախադրյալների ձևավորումն ու զարգացումը իրականացվում է սոցիալական տարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը հանրակրթությունն է:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն ձևավորում է մարդու գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը, զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է. մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը:

Գեղագիտական դաստիարակուությունը սերտորեն կապված է բարոյական դաստիարակության հետ: Գեղագիտականի և բարոյականի միասնությունը ավելի

ցայտուն արտահայտվում է արվեստում: Իսկական արվեստը հանդիսանում է մարդու հոգևոր զարգացման միջավայր, որտեղ միաձուլվում են և փոխադարձաբար իրար հարստացնում են բարոյականն ու գեղագիտականը: Այդ կապերին դեռևս հինգերորդ դարում անդրադարձել է Եզնիկ Կողբացին, ով գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն:

Գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է տարիքային բոլոր փուլերում, և ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը:

Գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է ըստ տարիքային առանձնահատկությունների: Կրտսեր դպրոցականի հետաքրքրությունները մակերեսային են, հուզական, ապրումները՝ պարզունակ, ուշադրությունը՝ անկայուն: Նրանց հրապուրում է հիմնականում իրականացվող աշխատանքի արտաքին կողմը:

Գեղագիտական դաստիարակության խնդիրներն են.

1. սովորողների գեղագիտական ընկալումների դաստիարակում,
2. գեղագիտական դատողությունների ձևավորում,
3. գեղագիտական պատկերների ձևավորում,
4. գեղագիտական զգացմունքների դաստիարակում,
5. գեղագիտական ճաշակի դաստիարակում,
6. գեղագիտական ինքնադաստիարակություն, որոնց լուծումներից է կախված գեղագիտական դաստիարակության իրագործումը:

Սովորողների գեղագիտական կուլտուրան բարձրացնելու նպատակով պետք է նրանց պարզաբանել, թե ինչ է գեղագիտական ճաշակը:

Գեղագիտական ճաշակը գեղեցիկը զգալու ու գնահատելու ընդունակությունն է, գեղեցկության չափանիշները հասկանալու կարողությունը: Ուսուցիչը պետք է սովորողներին վարժեցնի ստեղծագործելու մեջ, իսկ գեղագիտական խնդիրների լուծման համար շատ կարևոր է սովորողներին արվեստի բնագավառներին մշտապես հաղորդակից դարձնելը: Մարդը չի կարող ապրել առանց գեղագիտության:

Դպրոցում գեղագիտության իրականացման միջոցներն են՝ իմացությունը, ուսումնական առարկաները, խաղը, ուսումնական աշխատանքները, ինքնագործունեությունը, գեղարվեստական գրականությունը, բնությունը, թատերական արվեստը:

Իմացության մեջ կարևոր դեր է խաղում մտածողությունը, ուրեմն՝ դաստիարակի խնդիրն է զարգացնել սովորողների գեղագիտական իմացությունը, ակտիվացնել նրանց մտածողությունը և այն ստուգել գործնականում:

Անգնահատելի է բնության դերը գեղագիտական դաստիարակության գործում, քանի որ բնության պատկերները թարմ են, բնական, և բնությունը գեղեցկության իսկական աղբյուր է: Ինչպես նշել է Կ.Դ. Ուշինսկին .«Երիտասարդ մարդու հոգու վրա ունեցած բնության ազդեցության ուժի հետ մանկավարժն անգամ մրցել չի կարող»: Բնությունը ներգործում է սովորողների հոգու վրա, ազնվացնում նրանց զգացմունքները, ուշադրությունն ու երևակայությունը: Դրա համար հմուտ մանկավարժը կազմակերպում է էքսկուրսիաներ, զբոսանքներ դեպի բնություն ու պահանջում գրավոր նկարագրել իրենց տեսածը, զգացածը:

Սովորողների գեղագիտական դաստիարակության իրագործման ուղիներն են. գեղագիտական լուսավորություն, որն իրենից ներկայացնում է արվեստի վերաբերյալ գրքի ընթերցանություն, մեծատաղանդ արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրություն, երաժշտության ունկնդրում, գեղարվեստական գրականության ընթերցանություն, ներկայացումների, կինոնկարների դիտում, որոնց յուրացումը զարգացնում է սովորողների զգայական ընկալումը:

Գեղագիտական դաստիարակության հիմնական նպարակը աշակերտներին գեղեցիկի աշխարհի հետ կապելն է, իրականության նկատմամբ գեղագիտական հարաբերությունների ձևավորումը, շրջապատող կյանքում գեղեցիկը լիաթոք զգալը, հասկանալը և գնահատելը, վատի և անընդունելիի նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելը:

Գեղագիտական դաստիարակության համար աղբյուրներ ու միջոցներ են դառնում բնությունը, աշխատանքը, արվեստն ու գրականությունը, լրատվության զանգվածային միջոցները, մարդու վարքը և մարկային փոխհարաբերությունները:

Վ.Ա. Սուխոմլինսկին գրել է. « Մարդն անջատվել է կենդանիների աշխարհից և դառել օժտված էակ ոչ միայն նրա համար, որ աշխատանքի առաջին գործիքն է շինել իր ձեռքով, այլև նրա համար, որ տեսել է կապույտ երկնքի խորությունը, արշալույսի վարդագույն շողքը, արևի ճառագայթի արտացոլումը ցողի կաթիլի մեջ, տեսել է ու հիացել և սկսել է ինքն էլ նոր գեղեցկություն ստեղծել»: Ըստ մեծ մանկավարժի՝ գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է աշխարհը ընկալելի

դարձնել երեխային՝ տեսնելու հոգևոր հարստությունը, բարությունը, սրտացավությունը և նրա մեջ արմատավորելու գեղեցիկը տեսնելու, լսելու, զգալու և այդ ամենը տեսնելու ուրիշների մեջ:

Կրտսեր դպրոցականի ուշադրությունն անկայուն է, նրան հոգնեցնում են արվեստի ստեղծագործությունների հետ երկարատև շփումը: Կրտսեր դպրոցականի մտածողությունը պատկերավոր է, առարկայական և գեղագիտական դաստիարակությունն այս տարիքում արդյունավետ կիրականանա, եթե այն կապվի դպրոցական կենսափորձի հետ, նրա տեսածը, զգացածը և կատարածը առնչվի գեղագիտական պատկերացումների և գեղագիտական ճաշակի ձևավորման հետ: Ջ. Գյուլյումյանը նշել է, որ այս տարիքում ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել՝ օգտագործելով երեխաների բոլոր զգայարանները: Ուսուցիչը ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի, ավելի քիչ կատարի, ավելի շատ մասնակից դարձնի:

Գեղագիտական դաստիարակությունն իրականանում է ոչ միայն դպրոցում, այլ նաև բնության մեջ, հասարակական միջավայրում, ընտանիքում:

Դպրոց գնալով սկսվում է երեխայի կյանքի նոր շրջան. նրա առաջատար գործունեությունը դառնում է ուսումը իր հատուկ ռեժիմով, երեխայի նյարդահոգեբանական մակարդակի և անձնային որակների հատուկ պահանջներով:

Շատ կարևոր է, որ բնության, խաղի, գեղեցիկի, երաժշտության, երևակայության զարմանալի աշխարհը, որը շրջապատում է երեխային մինչև դպրոց հաճախելը, չփակվի երեխաների առջև դասարանի դռնով: Երեխան միայն այդ ժամանակ կսիրի դպրոցը, երբ նրան հնարավորություն տան ուրախանալու այնպես, ինչպես մինչև արվեստում գեղեցիկի ընկալման, գեղագիտական զգացումների, ճաշակի, դպրոց գալը: Այսպիսով՝ գեղագիտական դաստիարակությունը կյանքում և պատկերացումների, պահանջմունքների, արժեքների, գեղեցիկի գնահատման կարողությունների ձևավորման գործընթաց է, որն իրականանում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում, սակայն առավել համակարգված, նպատակաուղղված իրականացվում է կրթական հաստատություններում:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Հանրակրթական դպրոցում գեղագիտական դաստիարակության խնդիրը պետք է իրականացնել ոչ միայն արվեստի կամ հումանիտար ուսումնական առարկաների միջոցով: Ռուս նկարիչ և մանկավարժ Նեմենսկին գրել է. «Գեղագիտական դաստիարակության համակարգը պետք է լինի միասնական, միավորի բոլոր առարկաները, արտադասարանական պարապմունքները, դպրոցականի հասարակական ողջ կյանքը, որտեղ պարապմունքի յուրաքանչյուր տեսակ գեղագիտական մշակույթի և անձնավորության ձևավորման գործում ունի իր խնդիրը»:

Սակայն ոչ հումանիտար ուսումնական առարկայի ուսուցիչը գեղագիտական արժեքների ձևավորմանը հատկացնում է աննշան տեղ, մանավանդ երբ խոսքը վերաբերում է առաջին հայացքից գեղագիտությունից հեռու այնպիսի մի ուսումնական առարկայի, ինչպիսին մաթեմատիկան է: Մինչդեռ հանրակրթական դպրոցի մաթեմատիկական առարկաները կարևոր տեղ են զբաղեցնում և ունեն գեղագիտական արժեքների ձևավորման , գեղագիտական դաստիարակության մեծ ներուժ: Մարդկային խոսքի այնպիսի կարևորագույն տարրեր, ինչպիսիք են հիմնավորվածությունը, տրամաբանական խստությունը, ապացուցվածությունը, որոնք համարվում են գիտական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշներ, իրենց լիարժեք դրսևորումը ստանում են հենց մաթեմատիկայում:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտական տարրի բացահայտումը ոչ միայն նպաստում է սովորողի գեղագիտական ունակությունների զարգացմանը, այլև թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել մաթեմատիկայի ուսուցման գործընթացը:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության միջոցները բազմազան են: Այն արդյունավետ է իրականանում, երբ երեխան ակտիվորեն է ներգրավվում ուսումնական գործընթացում, դատողություններ է անում,հնարավորություն ունի շփվել գեղեցիկի հետ, նկարել, ստեղծագործել, երգել: Կարևորագույն միջոց են մեդիատեխնոլոգիաները, ցուցադրական նյութերը, ուսուցչի խոսքը: Առհասարակ շրջակա միջավայրը աշակերտների մեջ ձևավորում է

ներդաշնակություն, կենսախինդ տրամադրություն, հաճելի զգացումներ: կրտսեր դպրոցականների հոգևոր աշխարհի վրա ահռելի ներգործություն է թողնում գեղարվեստական գրականությունը:

Հաշվի առնելով դպրոցականների տարիքային և ճանաչողական հնարավորությունները՝ կրտսեր դպրոցի ուսուցիչը որոնում է գեղագիտական դաստիարակության իրականացման այնպիսի ուղիներ, որոնք կօգնեն երեխային դյուրին և ճիշտ ընկալելու գեղեցիկը արվեստում, աշխատանքում, բնության մեջ և առօրյա կյանքում:

Կարևոր նշանակություն ունեն դասական երաժշտության ունկնդրումը, պատմվածքների, ընթերցանությունը, գեղարվեստական ներկայացումները,կինոդիտումները,այցելությունները մշակութային օջախներ: Այս ամենը զարգացնում է սովորողի զգայական ընկալումը: Աշակերտը ունկնդրողից և դիտորդից աստիճանաբար հանդես է գալիս ստեղծագործողի դերում:

Գեղագիտական դաստիարակության իրականացման արդյունավետ պայմաններից են դպրոց-ընտանիք համագործակցությունը: Ընտանիքում կարևոր նշանակություն ունի նաև ազգային մշակույթը՝ ազգային և ընտանեկան տոները:

Տեխնոլոգիա ուսումնական առարկան սովորեցնում է ստեղծագործել, վերահսկել սեփական աշխատանքը, գնահատել շրջապատի գեղեցկությունը, պատրաստել գեղեցիկ և գունագեղ առարկաներ՝ պահպանելով չափը, ձևը, գույնը, ձևավորումը:

Տեխնոլոգիա առարկան գեղագիտական, մտավոր, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության գործուն միջոց է:

Երգ-երաժշտությունը, կերպարվեստը, ես և շրջակա աշխարհը առարկաները ևս հնարավորություն են ընձեռնում աշակերտների մեջ արմատավորել գեղագիտական դաստիարակությունը:Պատահական չէ, որ բարձր կրթական մակարդակ ունեցող երկրներում ներկայումս էլ մտահոգության առարկա է հատկապես երաժշտության զարգացումը:

Առաջին դասարանում իրենց տարիքին համապատասխան երաժշտություն լսելով, սովորելով պարզապես սկզբից մինչև վերջ ունկնդրել երաժշտական երկերը, երեխաները միևնույն ժամանակ ձեռք են բերում նախնական գիտելիքներ տվյալ առարկայից:

Երկրորդ դասարանում, շարունակելով կուտակել գեղարվեստական տպավորություններ, երեխաները ունկնդրած երկերի օգնությամբ պատկերացում են ստանում բուն երգի և կրկներգի մասին:

Այս նախնական զգացողությունից դեպի երգելիս հաճույք ստանալու և դրանով իսկ երգելու մշտական պահանջ զգալու աստիճանը կատարվող անցումն այն առաջին էական հաղթանակն է,որ տանում է ուսուցիչը ուսումնադաստիարակչական իր աշխատանքներում:

Արտահայտիչ կատարումն այն առաջին աստիճանն է, որտեղ դրսևորվում է երեխայի գեղագիտորեն դաստիարակված լինելը: Եվ արտահայտիչ կատարման հաճույքը, ոգեշունչ, ինքնամոռաց տրամադրությունը, որով համակվում է երեխան, հեվց այն գեղագիտական հաճույքն է, որ նա ապրում է՝ զգալով ու ըմբռնելով երաժշտությունը որպես այդպիսին: Տարբեր ստեղծագործությունների ունկնդրման ու կատարման միջոցով երեխաները ևս մեկ անգամ համոզվում են, որ երաժշտությունը կարող է արտահայտել միաժամանակ տարբեր տրամադրություններ և տարբեր հուզական վիճակներ՝ երջանկություն, բնության ամենատարբեր երևույթների նկարագրություն, ուրախություն, հուզմունք: Վ. Ա. Սուխումսկին գրել է. «Ձեռը ջութակ վերցնող մարդը չի կարող վատ բան կատարել»:

Դպրոցը, ուսուցիչները և աշակերտները, իբրև զգայուն ականջ, պետք է լսեն, գրի առնեն և պահպանեն իրենց միջավայրում ծնունդ առնող ժողովրդական նոր երգերը:

Բնությունը և գույները, բնության երփներանգությունը և գունանկարչությունը անբաժան են իրարից: Ամեն մի երեխա մինչև դպրոց գնալը որոշ հասկացողություն ունի գույների մասին: Բայց տարրական դպրոցում, դեռևս առաջին դասարանից, անմիջական ծանոթացումը բնության գույների հետ անհրաժեշտ է իրականացնել շրջագայությունների միջոցով:

Հայաստանում չկա այնպիսի վայր, որտեղ չլինի մոտիկ անտառ կամ գոնե պարտեզ, դաշտ կամ գետափ: Եվ շրջապատի գույները, միևնույն ժամանակ գունանակարչության ներածությունը, նյութական և հոգեբանական նախապատրաստություն է լինելու:

Առաջին ծանոթությունները բավական է սահմանափակել հիմնական, հաճախ հանդիպող գույները վերհիշելով և անվանելով: Այստեղ ևս երեխաները կզգան բնության գունային հարստությունը: Բավական է մի անգամ գարնանը

աշակերտներին տանել անտառ, որպեսզի նրանք սկսեն տարբերել մուգ կանաչը բաց կանաչից, վառ գույնը մեղմ գույնից: Դիտումների ընթացքում նրանք բացահայտում են թաքնված գեղեցկությունը և համոզվում, որ բնության մեջ ամեն ինչ կատարյալ է: Ուսուցչի խորհրդով նրանք հատուկ ուշադրություն կդարձնեն բնության գույներին, ձևերին, ձայներին: Շատ կարևորվում է այդ դասերից առաջ կամ հետո էքսկուրսիաների կազմակերպումը:

Տարրական դպրոցում մայրենի դասագրքում զետեղված նյութերը միտում ունեն ոչ միայն գրավիչ, հետաքրքիր, բազմաբնույթ առաջադրանքներով, խնդուկներով, բառախաղերով, զվարթ պատմություններով, առածներով, դարձվածքներով, հանելուկներով, շուտասելուկներով իրականացնելու ուսուցողական և դաստիարակչական նպատակներ, այլև բանավոր և գրավոր խոսքի միջոցով ուսուցումը դարձնել արագ, հեշտ ու արդյունավետ, երեխաներին մղելու գեղեցիկը, բարին տեսնելու, գնահատելու կարողություններ, նպաստում են երեխաներին ուսումնական խաղերի օգնությամբ նոր գիտելիքների հաղորդմանը, աշակերտներին հնարավորություն է ընձեռնվում ստեղծագործաբար կիրառել իրենց գիտելիքները, ճանաչել ընկերների խաղային դրսևորումները և գեղագիտորեն ընկալել խաղի բովանդակությունը:

Գիտելիքները, որ ձեռք են բերում աշակերտները, ոչ միայն սոսկ տեղեկություններ են, որ հարստացնում են միտքը, այլև կրթում են զգացմունքը, քայլ առ քայլ գեղեցիկի ճաշակ են առաջ բերում: Բայց ուսումնական առարկաների թվում, իբրև զորավիգ գեղագիտական դաստիարակության, բացառիկ տեղ է գրավում մայրենի լեզուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտական դաստիարակությունը լուծում է մի շարք խնդիրներ՝ գեղեցիկի իդեալի ձևավորում, արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ հետաքրքրությունների դաստիարակում, զգացմունքային կուլտուրայի պատվաստում, գեղագիտական զգացումների, ճաշակի, գնահատման, ստեղծագործական կարողությունների զարգացում, գեղագիտական փոխհարաբերությունների մշակում, գեղեցիկի պահանջմունքների դաստիարակում, գեղեցիկի հետ հաղորդակցման միջոցով հուզական ապրումների առաջացում:

Գեղագիտական դաստիարակության մեթոդներ ու միջոցներ են անձնական օրինակը, երկխոսությունը, դպրոցական պարապմունքները, զարգացման կենտրոնները, էքսկուրսիաները, այցելությունները թանգարաններ, թատրոններ, պատկերասրահներ, փառատոններ: Բայց, այնուամենայնիվ, շատ կարևոր է ուսուցչի անձնական օրինակը: Նա է երեխայի՝ աշակերտի գիտակցությունում ձևավորում գեղագիտական իդեալ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Բալյան Ա.Ա. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, Լույս հրտ. 1974թ.

2. Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար: Երևան 2017

3.Սուխոմլինսկի Վ.Ա. Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, Լույս հրտ. 1979թ.

4. Հայկական հանրագիտարան

5. Գյուլումյան Ջ. Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ-97,2004թ.

6.Սարգսյան Վ. Ա. Այբբենարան: Մեթոդական ձեռնարկ, Երևան 2006թ.